Շրջան 1
Զբաղվածության Հավասար Հնարավորությունների Գրասենյակ
1656 Union Street
Eureka, CA 95501
(707) 441-5814

Շրջան 2
EEO Գրասենյակ
1657 Riverside Drive
Redding, CA 96001
(530) 225-3055

Շրջան 3
EEO Գրասենյակ
703 B Street
Marysville, CA 95901
(530) 741-7130

Շրջան 4
EEO Գրասենյակ
111 Grand Avenue
Oakland, CA 94612
(510) 286-5871

Շրջան 5
EEO Գրասենյակ
50 Higuera Street
San Luis Obispo, CA 93401
(805) 549-3037

Շրջան 6
EEO Գրասենյակ
1352 West Olive Avenue
Fresno, CA 93728
(559) 444-2522

Շրջան 7
EEO Գրասենյակ
100 S. Main Street
Los Angeles, CA 90012
(213) 897-0797

Շրջան 8
EEO Գրասենյակ
464 West 4th Street
San Bernardino, CA 92401
(909) 383-4229

Շրջան 9
EEO Գրասենյակ
500 S. Main Street
Bishop, CA 93514
(760) 872-0752

Շրջան 10
EEO Գրասենյակ
1976 East Dr. Martin Luther King Jr. Blvd.
Stockton, CA 95205
(209) 948-3911

Շրջան 11
EEO Գրասենյակ
4050 Taylor Street
San Diego, CA 92110
(619) 688-4249

Շրջան 12
EEO Գրասենյակ
1750 East 4th Street, Suite 100
Santa Ana, CA 92705
(657) 328-6596

Գլխամաս
Քաղաքացիական Իրավունքի VI Հոդվածի Համակարգող
1823 14th Street
Sacramento, CA 95811
(916) 324-8379

Տվյալ հրատարակությունը հասանելի կլինի այլընտրանքային ձևաչափերով՝

Բրեյլի գրերով
Մեծ տպատառերով
Համակարգչային սկավառակով
Ձայնագրությամբ կամ
այլ լեզվով ըստ պահանջի՝
զանգահարելով Բիզնեսի և Տնտեսական Հնարավորությունների Caltrans-ի Գրասենյակ
(916) 324-8379
711 (TTY)

Caltrans

April 2019
Armenian

Caltrans-ը և Դուք

Ձեր Իրավունքները VI Հոդվածի ներքո և առնչվող Օրենքներ

Տվյալ գրքույկի նպատակն է Տեղեկացնել Ձեզ 1964թ-ի Քաղաքացիական Իրավունքի մասին Օրենքի VI Հոդվածի պահանջների և այդ պահանջների ներքո Ձեր իրավունքների մասին

Caltrans

Ի՞նչ է VI Հոդվածը:

VI Հոդվածը դա 1964թ-ի Քաղաքացիական Իրավունքի մասին Օրենքի դրույթն է:

Քաղաքացիական Իրավունքի մասին Օրենքի VI Հոդվածը (մաս 601) նախատեսում է՝

"Ոչ մի անձ Միացյալ Նահանգներում չպետք է՝ ռասայի, գույնի կամ ազգային պատկանելիության հիմքով, չթույլատրվի մասնակցելու, մերժվի նպաստներից, կամ ենթարկվի խտրականության՝ Դաշնային ֆինանսական աջակցություն ստացող որևէ ծրագրի կամ գործնեության շրջանակներում:" (42 U.S.C. Sec. 2000d)

Ի հավելումն, Փոքրամասնությունների և Ցածր Եկամուտ Ունեցող Բնակչության շրջանում Շրջակա Միջավայրի Հավասարությունը Ապահովելու Դաշնային Գործողությունների մասին 1994 թ-ի 12898 Գործադիր Հրամանագիրը նախատեսում է՝

"Յուրաքանչյուր Դաշնային գործակալություն պետք է իր առաքելության մաս դարձնի Շրջակա Միջավայրի Հավասարությանը հասնելու նպատակը՝ճանաչելով և, ի պատշաճ, հասցեավորելով իրենց ծրագրերից, քաղաքականություններից և գործողություններից բխող անհավասարաչափորեն բարձր և վտանգավոր ազդեցությունը փոքրամասնությունների և ցածր եկամուտ ունեցող բնակչության առողջության և շրջակա միջավայրի վրա:"

Առնչվող օրենքները ապահովում են սեռի, տարիքի կամ հաշմանդամության հիմքով խտրականության դեմ պաշտպանություն՝ Դաշնային ֆինանսական աջակցություն ստացող ծրագրերի միջոցով:

Ի՞նչ է սա նշանակում:

Որ Caltrans-ի ծառայությունները ապահովում են, որ Caltrans-ի գործնեությունից բխող բոլոր ծրագրերից, ծառայություններից և նպաստներից օգտվելը և դրանց հասանելիությունը կիրագործվի առանց ռասայի, գույնի, ազգային պատկանելիության, սեռի, տարիքի, հաշմանդամության կամ սոցիալտնտեսական կարգավիճակը հաշվի առնելու:

Caltrans-ը թույլ չի տա խտրականության դրսևորումներ Caltrans-ի աշխատակիցների կամ դաշնային միջոցներ ստացողների կողմից՝ ինչպիսիք են քաղաքները, քաունթիները (գավառ), կապալառուները, խորհրդականները, մատակարարները, համալսարանները, քոլեջները, պլանավորման գործակալությունները և որևէ այլ դաշնային աջակցությամբ մայրուղու ֆինանսավորման միջոցներ ստոցողները:

Caltrans-ը արգելում է ցանկացած խտրական գործողություններ, որոնք կարող են հանգեցնել՝

- **Ցանկացած անձին ցանկացած ծառայության, ֆինանսական օգնության, կամ առավելության մերժման, որը տրամադրվում է այն ծրագրի շրջանակում, որին նա կարող է այլապես իրավասու լինել;**
- **Մասնակցության համար տարբեր չափանիշների կամ պահանջների;**
- **Ծրագրի որևէ հատվածում մեկուսացման կամ առանձնացված վերաբերմունքի դրսևորման;**
- **Նպաստի տրամադրման որակական, քանակական կամ եղանակի տարբերությունների դրսևորման;**
- **Ամբողջությամբ կամ մասնակիորեն դաշնային միջոցներով կառուցված որևէ հաստատությունում իրականացված որևէ գործնեության մեջ խտրականության դրսևորման;**

VI Հոդվածի, առնչվող օրենքների, և Շրջակա Միջավայրի մասին Նախագահական Գործադիր Հրամանագրի պահանջներին համապատասխանելու նպատակով, Caltrans-ը՝

- **Կխուսափի կամ կնվազեցնի փոքրամասնությունների և ցածր եկամուտ ունեցող բնակչության առողջության և շրջակա միջավայրի վրա ունեցած վտանգավոր ազդեցությունը;**
- **Կապահովի բոլոր համայնքների, այդ թվում փոքրամասնությունների և ցածր եկամուտ ունեցող բնակչության, ամբողջական և արդար մասնակցությունը տրանսպորտային երթևեկության վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացներում;**
- **Կկանխի փոքրամասնությունների և ցածր եկամուտ ունեցող բնակչության կողմից նպաստներ ստանալու մերժումը, դրանց կրճատումը կամ զգալի ուշացումները:**

Ի հավելումն, ցանկացած ստացող կողմ, ներառյալ բայց չսահմանափակվելով Մայրաքաղաքային Պլանավորման Կազմակերպություններով, ինչպես նաև քաղաքներով և քաունթիներով, որոնք ստանում են դաշնային ֆինանսական աջակցություն, պատասխանատու է իր ծրագրի և գործնեության կառավարման համար՝ առանց ռասայի, գույնի, ազգային պատկանելիության, սեռի, տարիքի, հաշմանդամության կամ սոցիալտնտեսական կարգավիճակը հաշվի առնելու:

Նպաստներ և Ծառայություններ

Caltrans-ի առաքելությունն է Կալիֆորնիայի բնակչությունը ապահովել անվտանգ արդյունավետ միջմոդուլային տրանսպորտային համակարգով: Caltrans-ի կողմից իրականացվող ողջ աշխատանքը նպատակաուղված է աջակցելու Կալիֆորնիայի ամբողջ բնակչության տրանսպորտային կարիքներին՝ անկախ նրանց ռասայից, գույնից, ազգային պատկանելիությունից, սեռից, տարիքից, հաշմանդամության կամ սոցիալտնտեսական կարգավիճակից:

Արդյո՞ք Ձեր իրավունքները խախտվել են:

Եթե Դուք կարծում եք, որ ենթարկվել եք խտրականության Ձեր ռասայի, գույնի, ազգային պատկանելիության, սեռի, տարիքի կամ հաշմանդամության նկատարումներով, ապա Դուք կարող եք գրավոր բողոք ներկայացնել Caltrans-ի Զբաղվածության Հավասար Հնարավորությունների (EEO) Գրասենյակ: EEO Շրջանային գրասենյակները տեղակայված են ողջ նահանգով մեկ: Հասցեները և հեռախոսահամարները Դուք կգտնեք տվյալ գրքույկի հետևի էջում: VI Հոդվածով բողոքները ուղղվում են Սակրամենտո, որպեսզի քննության ենթարկվեն Caltrans-ի Բիզնեսի և Տնտեսական Հնարավորությունների Գրասենյակի VI Հոդվածի Ծրագրի շրջանակներում:

Ո՞վ է պատասխանատվություն կրում VI Հոդվածով:

Caltrans-ի բոլոր աշխատակիցները և նրա գործառույթային ծրագրերը: Caltrans-ի Բիզնեսի և Տնտեսական Հնարավորությունների Գրասենյակի VI Հոդվածի Ծրագիրը տրամադրում է շարունակական առաջնորդություն, ուղղորդում և տեխնիկական աջակցություն՝ մշտապես ապահովելով VI Հոդվածի և Շրջակա Միջավայրի Արդարության մասին Գործադիր Հրամանագրի համապատասխանությունը: